

ԼԵՀԱՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՆԻԹԱԿԱՆ ՎՆԱԾՆԵՐՈՒՆ
ՄԷԿ ՄԱՍԸ .

Լեհաստանի լրագրաց մէկուն հաշուովը, այս անգամուան ապստամբութեան մէջ մինչեւ ցայժմ մեռած ու զարնուած մուսներուն թիւը 3,200 հոգի է, իսկ Լեհացոց կողմանէ մեռնող ու վիրաւոր կիսմրուի 28,400 հոգի . բաց խոցանէ՝ 6295 հոգի գերի ընկան մուսաց ձեռքը : — Նոյն լրագրին խօսքին նայելով, այժմ Լեհաստանի մէջ ապստամբաց թիւը 3000-էն աւելի չէ . մինչդեռ ամառը երբեմն 30 հազարի կիսանէր :

ՌՈՒԹԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՆՅԵԱԼ ՏԱՐԻՈՅՆ ԱՌԱՋԻՆ ԶՈՐՍ
ԱՄՍՈՅ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ .

Ռուսաց պաշտօնական մէկ լրագիրը կճանուցանէ թէ անցած 1863 տարւոյն առաջին չորս ամսուանը մէջ 632 կրակ պատահեր է Ռուսաստանի քաղաքները, եւ 2417 կրակ գեղերը . ամենուն մէկէն ըրած վնասը 2 միլիոն արծաթ ըուպ-

լիէն աւելի : Այն կրակներուն մէջ մեռած մարդկանց թիւը 126-ի կիսանի :

Կիսամարուի թէ մուսաստանի մէջ տարին 2 միլիոն մարդ կմեռնի, եւ օրը 570-էն աւելի . 1863-ին առաջին չորս ամսուանը մէջ 7155 հոգի տարածամ մահուամբ մեռեր են : Այս ատենէ առաջ մեռնողներուն շատին մահուանը պատճառ արբեցումիւնն է, մանաւանդ քանի որ գինին ու օղին աժընցան : Մնացեալ տարածամ մահերը եղած են խղիւղելով, անձնասպանութեամբ, դիպուածով, ծեծով, կրակով ու պաղելով :

ԱՐԴԵՋԵԱՆ ԶՐՀՈՐ ԻՓԵԹԵՐՊՈՒՐԿ

Փեթերպուրկի մէջ արդեգեան ջրհոր մը փորելու հետ են . այս օրերս 520 ոտնաչափ խորութեան հասեր են, եւ առատ մաքուր ջուր ելեր է : Սակայն փորուածքը առաջ կտանին՝ յուսալով որ աւելի լաւ ու առատ ջուր գտնուի բոլոր քաղաքին համար :

ԵՂԱՅՐՈՒԹԻՒՆ

Խ Ր Ա Խ Ո Ւ Ս Զ Ա Յ Ա Ղ Գ Ա Շ Ա Հ Վ Ա Ս Տ Ա Կ Ո Յ

Ի Ն Ո Ր Ն Ա Խ Ի Ջ Ե Ի Ա Ն

Բարի եւ օգտակար դիտաւորութեամբ սկսուած գործը որքան եւ ծանր կերպով յառաջանայ՝ չկրնար խափանուիլ թեթեւ արգելքներով, երբ Աստուծոյ օհնութիւնը վրան է, բարեկարգ տէրութեան մը օրէնքներուն համեմատ, եւ ժողովրդոց մեծ մասին գովասանութեանը արժանի :

Այսպիսի գովելի գործերէն մէկն է անշուշտ այն եղբայրութիւնը կամ ընկերակցութիւնը՝ որ գրեթէ 20 տարիէ ի վեր սկսած է ձեւանալ նախիջեւանի ժողովրդեան մէջ, եւ այս տարի կանոնաւոր կազմութեա-

նը հասնելուն կյուսացուի անտարակոյս . որովհետեւ նպատակը աստուածահաճոյ եւ օգտակար է, բռնուած միջոցներն ալ՝ այն նպատակին հասնելու յարմար :

Այս եղբայրութեան կանոնադրութիւնը չեմք կրնար հրատարակել՝ քանի որ տէրութեան կողմանէ ըստ օրինի չէ հաստատուած . բայց համառօտ պատմութիւնը հարկ կհամարիմք այս տեղս դնել, որպէս զի նախ մեք խախտաիջ եղած գտնուիմք գրով այսպիսի օգտակար ընկերակցութեան, եւ ապա իրմէ սպասեմք ուղիղ եւ եռանդուն ընթացք՝

իւր գովելի նպատակին հասնելու :

Եպիփան պատանին 1846 թուականին, այսինքն իւր հօրը՝ Պոպոյեան Յակոբ Աղային վախճանելէն տարի մը ետքը, իրեն հասակակից աղքատ տղայոց շատին դատարկ ու անուսուս մնալուն վրայ սրտին մէջ սաստիկ կարեկցութիւն մը զգալով՝ սկսաւ մըտածել թէ արդեօք ինչ հնարքով կարելի էր նոցա, գոնէ մէկքանիին, ուսում եւ կրթութիւն առնելուն ձեռնադրութիւն մը ընել : Բարեպաշտական կրթութիւնը իրեն մատաղ հասակին շատ սիրելի լինելով, ջերմեռանդ սրտով իւր զգացմունքը պարզեց առաջի Տիրամօր սուրբ Աստուածածնին, եւ մտածեց որ աղքատ եւ որք տղայոց խնամք տանելու համար հոգեւոր եղբայրութիւն մը հաստատէ իրեն հասակակից տղայոց մէջ, եւ այս իւր խորհուրդը յայտնեց նախ իւր տարեկից բարեկամ Սարգսին Չախալեան, եւ երկուքը իմիասին իմացուցին Գրիգորի Սալթիբեանց եւ Անդրէասայ Մեսնիբեանց, որք եւ իսկոյն միաբանեցան նոցա հետ : Յետոյ գտան նոյնպէս իրենց հասակակից Մերկեւիոս Չախալեան եւ Յովհաննէս Լոյսպարոնեան Սալթիբեանցը, եւ առաջարկութեամբ Եպիփան պատանւոյն գանձանակ մը սահմանեցին, ուր ամէն շաբաթ կձգէր իւրաքանչիւրը ինչ որ ծնողացմէն կընդունէր իւր առանձին ծախուցը համար : Բայց այս ընկերակցաց միտքը եւ գործը դեռ յայտնի չէր՝ ոչ օտարաց եւ ոչ իսկ իրենց ծնողացը :

Այս կերպով երկու տարուան մէջ այն մանկահասակ եղբարց հաւաքած սորկին գումարն եղաւ 36 բուպլի թղթագրամ. եւ տեսնելով որ իրենց բարի գործը կընայ յաջողութիւն ունենալ, 1848-ին այն կամաւոր տուրքը տարեկան տուրքի դարձուցին. խօսք

գրին որ ամենայն եղբայրակից տարին 7 բուպ. եւ 20 քոփեկ թղթագրամ վճարէ գանձանակին, եւ գանձապետ որոշեցին Սարգիս Չախալեանը՝ Տ տարուան ժամանակաւ : Այն տարին եղբայրակից գրուեցան Յովհաննէս Պիլիկեանն ու Թէոդորոս Խոճայեանը :

Յաջորդ տարին հաւաքուած փողին գումարն եղաւ 124 բուպլի, եւ եղբայրակից գրուեցաւ Բաղդասար Խոճայեանը : — 1850-ին եղբայրութեան հաւաքած փողն եղաւ 229 բուպ. 51 քոփ. իսկ 1851-ին 353 բուպ. 10 քոփ. եւ 1852-ին 478 բուպ. եւ 52 քոփ. արծ. :

Մինչեւ այն ժամանակը եղբայրութիւնը իրեն որոշ նպատակ մը որոշած չլինելով, եւ միայն փող հաւաքելու նայելով, այլ եւ այլ կասկածներու տեղիք տուաւ նախիջեւանի ժողովրդեան. մանաւանդ որ այն քաղաքին մէջ — ինչպէս նաեւ ընդհանրապէս ամենայն արեւելեան ժողովրդոց մէջ — սովորութիւն չէ եղած այսպիսի եղբայրակցութիւններ կամ ընկերութիւններ ընելը, եւ իսկոյն կասկածներ կծագին թէ արդեօք այդ մարդկանց միտքը ինչ է, արդեօք նոր աղանդ մը կուզեն հաստատել, եւ այլն, եւ այլն, այնպէս որ եղբայրակիցներէն մէկ երկուքը լքանելով եւ քաջուեցան, իսկ միւսերը իրենց մտքին յատկութիւնը եւ գործոյն անմեղութիւնն ու ուղղութիւնը ըստ կարի հասկըցընելով խոհական անձանց՝ որոշեցին մէջերնին որ հաւաքուած դրամագլխով ուսումնարան մը հաստատեն ժամանակով՝ որք եւ աղքատ տղայոց ուսում եւ կրթութիւն տալու համար : Այնուհետեւ, ինչպէս որ բնական է, եղբայրակիցները դիւրաւ աւելցան, եւ դրամագլուխը մինչեւ 1858-ին սկիզբները աճելով հասաւ 903 բուպ. 75 քոփ. :

Այն տարւոյն մայիս եւ յունիս ամիսներուն մէջ Նախիջեւան գալով վիճակիս նորընտիր Առաջնորդը, եղբայրութեան հիմնադրին տունը իջեւանեցաւ. եւ ինքն որ արգէն այն գործոյն համբաւը լսած էր՝ հարցուց Պարոն Եպիփանին, հասկըցաւ անոր նպատակը եւ ինչ վիճակի մէջ գտնուիլը. իրեն քովը հրաւիրեց բոլոր եղբայրակիցները, գովեց նոցա եռանդը, եւ նոցա խնդրանօքը խորհուրդ տուաւ որ այն գովելի եղբայրութեան նպատակը աւելի ընդարձակեն՝ որպէս զի աւելի շուտով աճի եւ պըտղաբերէ, եւ այնուհետեւ տէրութենէն ալ հաստատուելով՝ օր ըստ օրէ ծաղիկ եւ զարգանայ: Ուստի եւ նորա առաջարկութեամբը որոշուեցաւ որ ընկերութիւնը իրեն նըպատակ սահմանէ խրախուսել՝ այսինքն յորդորանք, քաջալերութիւն եւ օգնութիւն ընել որ եւ իցէ ձեռնարկութեան եւ աշխատութեան՝ որ ազգին յառաջագիմութեանը օգտակար ճանչցուի ընկերութենէն. անոր համար անունն ալ դրուի, ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ԽՐԱԽՈՒՍՉԱՅ ԱԶԳԱՇԱՀ ՎԱՍՏԱԿՈՅ, եւ եղբայրակից գրուողին տարեկան տուրքը սահմանուի տարին 12 բուպլի:

Յայտնի բան է որ այնուհետեւ ընկերութեան անձինքը աւելի եռանդով սկսան իրենց գործը յառաջ տանիլ. եւ թէպէտ Նախիջեւանի ժողովրդեան այս միջոցիս ունեցած վէճերն ու զբաղմունքը ուշացուցին ընկերութեան կանոններուն որոշուիլն ու տէրութեան հաստատութեանը առաջարկուիլը, սակայն եղբայրութիւնը իւր բռնած գովելի ընթացքէն ամենեւին չխոտորեցաւ: Ընդ հակառակն, այս միջոցիս ստոյգ տեղե-

կութիւններ առնելով եղբայրինոտար քաղաքին նորահաստատ դպրոցին բարեկարգութեանը վրայ, որոշեց որ այժմու հաւաքած ստղին գումարէն, որ է 1500 բ. արծ., 500 բուպլի տայ այն դպրոցին իբրեւ նպաստ, եւ մնացեալ գումարէն ժողովուելու շահին մէկ մասովը այն դպրոցին մէջ երկու չերքէզահայ աղքատ տղայք ուսում առնուն, իսկ միւս մասը ուրիշ ազգաշահ աշխատութեան մը գործածուի:

Ահաւասիկ Նախիջեւանի բարեպաշտ եւ ուսումնասէր երիտասարդաց մէկ մասին այս գովելի եռանդն ու աշխատութիւնը այս կերպով սկսաւ եւ այսպէս աճեցաւ մինչեւ ցայժմ՝ իրենց հասակին հետ: Տարակոյս չկայ որ եթէ այս եղբայրութիւնը շուտով առնուիւր կատարեալ ձեւակերպութիւնն ու պէտք եղած Կայսերական հաստատութիւնը, — ինչպէս որ կ'յոսացուի, — թէ եղբայրակից գրուողները պիտի շատնան, եւ թէ իրենց հաւաքած գումարը պիտի աճի ու մեծնայ: Եւ որովհետեւ երկար ժամանակով եւ շատ փորձերով տեսնուած է որ մեր ազգին մէջ կենցաղօգուտ գործ մը յառաջացնելու համար՝ ոչ այնչափ բազմութիւնն է հարկաւորը, եւ ոչ փողը, որչափ խաղաղութիւնն ու միաբանութիւնը, — ցանկալի է որ այս եղբայրութեան գրուողներն ու գրուիլ ուղողները՝ խաղաղասէր, անկողմնասէր եւ միաբանասէր անձինք լինին, եւ այն ժամանակը հաստատ դնեն մտքերնին որ իրենց գործը անպատճառ կ'յաջողի եւ օր ըստ օրէ կ'ալայծառանայ. զոր եւ այժմէն կ'մաղթեմք այն գեղեցիկ եղբայրութեան Խրախուսչաց ազգաշահ վաստակոց:

